

30 ԲԱՐՈՒ

ՄԷՃԱՄՈՒՄԻ ԱՆՊԱՐ

30 ԲԱՐՈՒ

DIRECTION DU JOURNAL

MEDJMOUA-T-AHBAZ

65, Grand'rue de Péra, Taxim, 65

Ս.ՊՈՒՆԷ ԶԻՆՈՒՄԻՍՏԱՆԻ ՍԵՐԻԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԴՐԱՄԱՐՈՒՄԻ
Իրաւագործ իշխման 6 ամիսը
Թարգմանիչ իշխման 60
Թարգմանիչ իշխման 85
Թարգմանիչ իշխման 20

ԶԱՐԳԵԼՆԵՐԻ ՎԵՐՈՒՄԻ ԻՐԱՎԱԳՈՐԾ

ԿԻՆԵԼԵՐԻ ՆԵՐՈՒ ՕԼՈՒՆՈՒՐ

Իրաւագործ իշխման արդարեւ թաղարկը :

مجموعة اخبار

بكاوغل تقسيم جاده-ی سومرو ٧٥

ԲԱՐԵՆՈՐԴՍԱՆ ՊԵՏԲԸ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Ժ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒՆԻՔ

Հայ Եկեղեցւոյ արտին վրայ բացուած վերջ մը կայ դարերէ ի վեր, հակասութիւնն է այն:

Ինչ որ ամենէն աւելի կը նուստացնէ և վարկազրկ կ'ընէ ո՛ր է զարդապետութիւնն յայտ խորհող մարդկութեան, իւր հակասութիւնն է են, — յայտնի կամ թաքտաւ:

Եթէ անժխտելի է այն՝ գիտական ու փիլիսոփայական վարդապետութեանց մասին, որչափ առաւել անժխտելի է կրօնական վարդապետութեանց մասին, որոնք կը յանդիմանան ո՛չ թէ մարդկային իմաստասիրութեան և հանճարոյ, այլ անստուածային Յայտնութեան վրայ, որ գերազանց և բացարձակ երաշխիքն է ստուգութեան:

Արդ եթէ էջմիածնական Եկեղեցին ներկայումս իսկ իբրեւ սոսկ մարդկային հաստատութիւն մը, ծնունդ գիտութեան և բանականութեան, իրեն չպիտի ներուէր երբեք հակասութիւններ քարոզել կամ հակասել իւր սկզբանց: Յայտնի է այն: Ուրեմն ինչպէս կրնան ներքին լինել իւր հակասութիւնք՝ երբ ինքզինք կը ներկայացնէ իւր իբրեւ հաստատութիւն մը անստուածային:

Եթէ բարենորոգման եռանդն գոգնել է մեծագոյն, այսպիսի հիմնական կէտի մը մոռացումն եպիսկոպոսի է չափազանց: Տարիներէ ի վեր բարենորոգման վրայ կը խօսուի ու կը գրուի շարունակ, և ո՛չ Հորոյ, ո՛չ Մուշեղ, ո՛չ Կորիւն, ո՛չ Բաբգէն և ո՛չ Վրդու շին մտածող երբեք թէ Հայ Եկեղեցին բարենորոգելու առաջին ու անհրաժեշտ պայմանն է մաքրել զայն իւր հակասութիւններէն, որոնք իբրեւ թուեաւոր մասնաճիւղներ կը հիւսնեն ու կ'ըստանան զայն: Ի մասնաւորի Մուշեղ և պիսկոպոս փոխանակ մտքի գոյնումներով օգը բաղխելու՝ եթէ «կրօնքի հիւստի» վերնագրին տակ Հայ Եկեղեցւոյ հակասութեանց դէմ բողոքներ ու դարձան պայաններ աներկիւղ, ուղիղ բանի և ճշմարտութեան տեսակէտով սքանչելի յղութեամբ մը գրած պիտի լինէր, պատուարներ իւր ուղիմութեան և օգտաւէտ իւր դաւանակից եղբարց առջամարակ:

Էջմիածնական Եկեղեցւոյ հակասութեանց մասին ամբողջ գաղափար մը կաղմելու համար կը բաւէ ընթերցումը Ս. Պատարագի աղօթիցի «Շարականներու հետ ո՛ր է «Քրիստոնեական» վարդապետութիւնը» մը, վաւերացնել կրօնական ժողովոյ և էջմիածնի կողմանէ: Իսկ եթէ ժամանակ ունենալով հանգիստ քաղաքացի միմիանց հետ այն նշանաւոր «Քրիստոնեական»ներն զօր Գառնիւրէ, Կաթողիկոսը ու կրօնական ժողովներ հաւատարմութեամբ կը գոչեն: Եւ ճշմարտութեան ու կը յանձնարարեն «Երկրորդ մանկանց Եկեղեցւոյ», և... ըստ ամենայնի համաձայն կը գտնեն «Հայաստանեայց ազգայնաւոր և անստերիւր վարդապետութեան», պիտի տեսնէ իսկոյն թէ ինչպէս ամենէն այսպիսի, հակասական ու հակասակ վարդապետութիւններ դէմ առ դէմ կը պարեն այդ դասադրոց մէջ, որոց

հեղինակներու մի մասն հայտնիով հանդերձ ընդդէմ Պատրիարքին և Պատրիարքին դէմ զօրնակէ կաթողիկոսէ և նոյն իսկ անկախ զանազան դոկտրիններ, և միւս մասն բարձրաբարաւ յայտարարելով հանդերձ թէ մաքրել չափ չեն չեն Հայաստանեայց առաքելական աւանդութիւններէն կը թարգմանէ կուրորէն բողոքականներու ամենէն յանդուգն ու ամբարշտ նորութիւններն: Այսպէս այն որ կ'ուսուցանէ թէ Գրիգորիոս Տէրն մը Ամենա. Հաղորդութեան մէջ ներկայ է իրապէս, ճշմարտապէս եւ զոյգապէս (գրեթէ քիչ Տրիտենդեան ժողովոյ բառերն իսկ են ասոնք), և այն որ կ'ուսուցանէ թէ Գրիգորիոս վարդապետ իւր իշխանակող ներկայ է Հաղորդութեան խորհուրդին մէջ, ... երկուքն ալ Հայ Եկեղեցւոյ վարդապետութեան թարգման և աւանդապահ՝ կը հռչակուին հոգեւոր ամենէն բարձր իշխանութեան կողմանէ:

Եթէ հակասական կրօնքներու մրցանակներ յատկացուին մի օր, տարակոյտ չունիմ ըստ թէ առաջին մրցանակն էջմիածնական Եկեղեցին պիտի չանի իսկոյն: Անեղծ հոգեւոր չեն կրնար ժխտել զայն: Սոյն իրողութիւնն ի կաթողիկոսութիւն դարձելու պատճառ եղած է յաճախ: Հակասութեան մէջ է էջմիածնական Եկեղեցին երբ մի կողմանէ կ'երգէ և կ'ըսէ կուրորէն իւր հաւատացելոց, «Հաւատաւ մի միայն ընդհանրական և առաքելական Ս. Եկեղեցի», և միւս կողմանէ կ'ուսուցանէ թէ ամեն «նախապաշտ» հարապատ քրիստոնեայ է, և մէկէ աւելի Եկեղեցիներ, անկիւրեան, լուսորական, մկրտական, յունադաւան, էջմիածնական և նոյն իսկ... հռովմէական Եկեղեցիք ճշմարիտ և ուղղափառ են:

Հակասութեան մէջ է էջմիածնական Եկեղեցին երբ ննչեցելոց համար կ'աղօթէ և աղօթել կուսայ իւր հաւատացելոց, և միւս կողմանէ կը քարոզէ թէ քաւաբանը ստուգութիւն մ'է, և թէ մահուան վերջ արքայութիւն և դժոխք միայն կայ: Ինչու ուրեմն աղօթել մեռելոց համար, քանի որ եթէ դժոխքն են՝ օգուտ չունի, և եթէ արքայութիւնն են՝ պէտք չունին մեր օգուտներէն:

Հակասութեան մէջ է էջմիածնական Եկեղեցին երբ մի կողմանէ կ'ուսուցանէ թէ Գրիգորիոս եթէ խորհուրդ հաստատեց յօգուտ հաւատացելոց, և միւս կողմանէ քործնականապէս վեց խորհուրդ և եթէ կը մատակարարէ... Եւ ինչու... հաւանորէն կ'ենթադրէ թէ Աստուած աւելորդ կամ միտակար բան ո՛րքաւ վերջին Օծումն հաստատելով. արդ հարկ է ըսել թէ այս երկու եթէ արդարութիւնք ալ նախատիք և հայտնութիւն են ընդդէմ Աստուծոյ որ ոչ աւելորդ և ոչ միտակար բան մը կ'ընէ երբեք:

Հակասութեան մէջ է էջմիածնական Եկեղեցին երբ իւր սքանչելի տաղերուն և աղօթից մէջ դաւանելով վերջ գիւնարոս «Գլուխ առաքելոց և վէմ Հաւատոյ» չվարարել յայտարարել թէ առաքելք բողոքն ալ հաւատար են, և թէ մեծագոյն առանձնաշնորհ մը չէ սրբուած անոնցմէ միոյն:

Հակասութեան մէջ է էջմիածնական Եկեղեցին երբ Ս. Հարց և Տիեզերական Ժողովներու հեղինակութիւնը կ'ընդունի:

անոնց հնազանդելու պարտաւորութիւնը կը քարոզէ, ու յետոյ անոնց միահաղոյն և չքել զկայսրութիւններն ի նպաստ Ս. Քահանայապետին առ իմն կը կոչէ անփոյթ, և Տիեզերական Ժողովներ երեքը միայն կը յարգէ, մնացեալ տասնեւեօթը կը մերժէ, և յայտնապէս կ'ապստամբի անոնց դէմ:

8 Նոյ. 1910

ՏՐԱՊԻԶՈՆ

Ձեր պատուական լրագրի 13/28 սեպտ. թիւին մէջ «Իրազէկ մը» ստորագրութեամբ յօդուած մը կարդացիք:

Այդ յօդուածը ծայրէ ի ծայր խեղաթիւրում մըն է բուն հարցին, որուն մէջ խիստ շահագրգռուած կ'երեւայ «Իրազէկ»ը զուտ անձնական տեսակէտէ, չի նայած վերոյիշեալ յօդուածի խրատական կեղծ վերջաւորութեանը:

Բուն իսկ հարցը, իր պարզութեան մէջ, հետեւեալն է: Տրապիզոնցիք գեղեցիկ առաւօտ մը յանկարծ կ'արթնան որ Պոլսն, Կաթողիկոսին կողմէ եղած հաւաքական հաղորդագրութեան մը հետեւէն գրեթէ անմիջապէս վերջ նուիրակ մը եկած է եղեր, Տրապիզոնի թեմին համար Եպիսկոպոսի մը ընտրութեան գործողութիւնները վարելու նպատակաւ: Տրապիզոնցիներու Կաթողիկոսի հայ համայնքի գրեթէ բացարձակ մեծամասնութիւնը իր տեսակէտով, նախորդ Եպիսկոպոսի հոգեւոր Գործը. Արքիեանի մահուանէ յետոյ, ամենեւին կարիք չէր գտար նոր Եպիսկոպոսի, քանի որ ան իր հոգեւոր պէտքերուն համար կարելի բաւարարութիւնը կը ստանար արդէն իր կղերէն, և բացարձակապէս չէր ցանկար նոր Եպիսկոպոսով մը երկարակուլ նորանոր բեռներ: Ժողովուրդը իր այս տեսակէտը, պատճառաբանեալ կերպով և ամենայն անկեղծութեամբ պարզեց նուիրակ Արք. Իսապէտեան Գերապաշտաւին, առաջիկով միանգամայն թէ այդպիսի ընտրութեան մը համար հին Կանոնագրութիւնը բացարձակապէս անբաւարար լինելով և զիտնալով միեւնոյն ատեն թէ կեղերնի երեսփոխանութիւնը մեր համայնական ամէն կարգի գործառնութեանց համար մէկ նոր Կանոնագրութիւն կը մշակէ, ուր գծուած կը լինին անշուշտ այդպիսի ընտրական հարցերու մէջ իր իրաւունքի և պարտականութեանց սահմանները, կը ցանկար չկանխել այդ Կանոնագրութիւնը և սպասել անոր հրատարակութեան՝ նախ քան Առաջնորդի մը ընտրութիւնը: Ժողովուրդին այս ամէն առարկութիւնները սակայն, չէին կրնար զօրել ներկայիս, Կաթողիկոսի հրամանին հանդէպ. ուստի կամայ թէ յաւանաւ ձեռնարկուեցաւ ընտրութեան: Ամէն պարագայի մէջ սակայն, հարկ էր որ ընտրելին լինէր իսկապէս արժանաւոր մէկը ամէն տեսակէտով, և այս ու միմիայն այս տեսակէտով ճամբայ ելլալով, և հաւանակ «Իրազէկ»ի և համամասններու կողմէ թեմիս այլ քաղաքներու մէջ թափուած ճիգերուն, քուէի մեծամասնութիւնը յանգաւ. Հ. Յովհ. Մ. Վ. Թոթաւանը: Ահա. այս է իրողութիւնը իր պարզութեան մէջ: Ուստի բացարձակ տու:

տեղ են «Իրազէկ»ի այն յետին յերկարանքները թէ Տրապիզոնցիք անպատճառ Միութեան կ'ուզեն և ոչ թէ Գոյնժի. ստույ մը՝ որ յերկարուած միմիայն խնդիր յարուցանելու. կը քեր գրգռուել և Գոյնժիներն ու Միութեանները հակամարտ բանակներ. ներկայացնելով, յոյն Գոյնժիներ և վիճեցնել Միութեանին մը ընտրութիւնը: Այս նպատակով է դարձեալ որ «Իրազէկ»ը, հարցը ձեռով ենթադրութիւններ կ'ընէ թէ սեղանոյ եկեղեցիի շինութեան համար Միութեաններու կողմէ դրամական օժանդակութիւն մը պիտի լինի եղեր մեզ, եթէ երբեք իրենցմէ ըլլայ ընտրուածը. սակեց զատ, այդ պարագային, վնասակար է երբ թէ արտօնութիւններ պիտի չնորսեն եղեր քաղաքիս ներկայ ազգային ժողովականներուն «ամեն բանի մեջ ձայն ունենալու համար»: Միւս կողմ իսկ խառնուելու վարդապետի և Մարդապետաց հաշիւներու:

Արդարեւ «Իրազէկ»ի իւրաքանչիւր բառէն թոյն կը ծորի: Ինքզինքն այս թեմին վրայ Եպիսկոպոս ընտրել տալու խօսքանկութեամբ, ու Առաջնորդարանի տուխարական թէ կղերական, անտեսական թէ հոգեւոր ամէն մէկ իշխանութիւն իր բունցեղին մէջ սեղմուել ցնորքով տարուած, որչափ ալ զգուշիւ, որչափ ալ սաղախական, ոչ մէկ սաղաքնք չէ խընայած իր այդ յօդուածին մէջ մտքերը պղտորելու համար: Տեղոյս Հայ Կաթողիկոսի հասարակութիւնը, յանձին իւր վարիչ Մարմիններու, ամենեւին կարիք ունի նորանոր արտօնութեանց, զի իշխանութեան այն որոշ մասը որ իր իրաւունքն է արդէն, զայն կը վայելէ լիովին, և ամենեւին պէտք չունի վարդապետի և Մարդապետներու ու համամասն խնդիրներու մէջ մտնելու, երբ ի հարկէ այդպիսի խնդիրները ոչ մօտէն ոչ ալ հեռուէն, տրուանապէս կամ բարոյապէս չեն վտանգեր իր շահերը: Կայսեր պատկանածը Կայսեր, Տիրոջ պատկանածը՝ Տիրոջ, Բայց, որչափ ալ աւետարանական, այսպիսի սկզբունքի մը հետ հաշտ չերեւար «Իրազէկ» յօդուածը, այլ իբր ճարտար որոնման յաւիճակի մը, աստուածապետական հովիւ աւանդով, այդպիսի սկզբունքի գործադրութիւնը «Ազատութեան և զարգացման քօղին տակ էջմիածնականաց վարդապետաց» կ'անուանէ, որմէ խիստ տրուաւ հետեւանքներ կարող են եղեր յաւանջ զալ: Թո՛ղ լաւ գիտնայ յօդուածը այս առթիւ մեր յայտնած մտքերը: Տրապիզոնի ժողովուրդեան այս կամ այն հատուածի կամ իր այդմեայ ներկայացուցիչներու ուրոյն կարծիքը չէ, ալ կը ներկայացնէ ամբողջ ժողովուրդեան հաւատամքը, և թէ, ովքեր ալ որ ընտրէ ազգային իր գործերը վարելու համար, մաքիւ չափ թոյլ չպիտի տայ՝ որ ո՛ր է մէկը յանդգնի իր իրաւունքները յափշտակելու:

Վարչապետ

Հայ-Կաթողիկոսի հասարակութեան Տրապիզոն, 3 Նոյ. 1910

Ի Խ Թ Ա Ր

Իսթանպուլում վէ թաղաւտա դազէթամըզա ապօնէ օլան վէ ապօնէլը միւստիթիւրի խիթամ պուլան զէվաթըն, ապօնէլը պէտէլէրինի կէօնէ տէրմէլէրինի րեհա խաթիլը:

ՄԻԻՆԱՍԻՊԵԹԻՅԼԷ

Ստորագրված Հուլիսի 19-ին, պրիմատսա
Զոհրապ Էֆ.յե ճեկապ վերերեք, տեմի
իր քել, «Թալիմկերե Զոհրատան չոգ Էֆ-
լիլ Գաբար վերվմիլ իտի. Էկեր պու-
այեանը թէսսիլ Զեթիմկերե վուգու-
պուլանաղլընը պրիսէ խոթը, չիւպեսիլ
Էթէսիր խոթը խոթը, Թալիմկերե սոն
իրնէրինսէ մուգատոտէրաթլա եախոտ
իրիկեր սեպկպլըլէ օրտուտա Զոհրա գու-
ուր իթտիրինտէ, պրուլաղ Թապուր-
աղը անըրորդ. Լալըն Սէլիտէրոն ինր
տիրկեր Զոգը ըսմը կլչիտոնէ, Զալըն հաղ-
էթ ին Թալիմկեր տալի պուլուլանաղլա-
նը ճիւթլէ, թէսիր իտէմէզ խոթը»

Պէկյօղլունա Թագսիմ ճասեհսնէ Ն. ԾԾ

Սահիպի իւրիեազ վե
միւսիւրը մեաւըլը ղագքսա
ՅՈՎՀ. ԹՈԼԱՅԵԱՆ